ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 64-4.1-14)

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է Մարտունու տարածքի մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններից անհրաժեշտ տեղեկատվության հավաքմանը, դպրոցական առարկայական և մարզական օլիմպիադաների, մրցումների, մշակութային միջոցառումների անցկացման նախապատրաստմանը, մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում փոխադրական և ավարտական քննությունների նախապատրաստմանը, իրականացնում է Բաժնի փաստաթղթային սպասարկումը, կատարում փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրի գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1,2/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

գրավոր դիմում՝ /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /փաստաթղթերի/ պատճեն /պատճեները/

աշխատանքային գրքույկի պատճենը՝/ ունենալու դեպքում/

քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.

արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.

մեկ լուսանկար 3.4 չափսի.

անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 13^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է «02» օգոստոսի 2017թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ